ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2020թ. N 289-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերով և հաշվի առնելով Արևիկ Հրաչիկի Թովմասյանի դիմումը (մտից N 1385, 03.12. 2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հրաչիկ Զաքարի Թովմասյանին, Ռուզան Գարեգինի Մեսրոպյանին, Աննա, Փառանձեմ, Նաիրա և Արևիկ Հրաչիկի Թովմասյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող 0,106 հա մակերեսով բնակավայրերի նշանակության տնամերձ (բնակելի կառուցապատման) հողամասին (կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0058-0007) տրամադրել հետևյալ հասցեն.

Ջերմուկ համայնք, գյուղ Կեչուտ, Երևանյան խճուղի N 58/7 հողամաս:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 դեկտեմբերի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2020թ. N 290-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 04.12.2020 թ. N 01 /11.2/7632-2020 գրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ, հունվարի մեկից մինչև 18-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում անասունների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել համայնքային հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Մարգարյան - համայնքի ղեկավարի տեղակալ
հանձնաժողովի քարտուղար՝ Արման Հայրապետյան - ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ–աուդիտոր

անդամներ՝ Ռոման Առաքելյան - Կարմրաշեն գյուղի վարչական ղեկավար
Սեդրակ Ասատրյան -Կեչուտ գյուղի վարչական ղեկավար
Անդրանիկ Աբրահամյան- Հերհեր գյուղի վարչական ղեկավար
Հայրապետ Մկրտչյան- Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար
Մանուկ Մանուկյան - Կեչուտ գյուղի անասնաբույժ
Այվազ Բարսեղյան - Գնդեվազ գյուղի անասնաբույժ
Սեյրան Հարությունյան - Կարմրաշեն գյուղի անասնաբույժ
Հարություն Սիմոնյան - Հերհեր գյուղի անասնաբույժ

2.Հանձնաժողովին՝ անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 դեկտեմբերի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 դեկտեմբերի 2020թ. N 291-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 279-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 34-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 9-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,27656 հա մակերեսով հողամասը որպես առանձին գույքային միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 279-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «վարելահող» բառը փոխարինել «այլ հողատեսք» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 դեկտեմբերի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2020թ. N 292-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 7-Ն որոշման և հաշվի առնելով «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի կողմից լիազորված «Ռեդինետ» ՓԲ ընկերության տնօրեն Ա. Քարամյանի՝ ս/թ նոյեմբերի 26-ի N 204/20 գրությունը (մտից՝ 2020 թվականի դեկտեմբերի 4-ի N 1392)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող թվով 108 (հարյուր ութ) լուսավորության հենասյուները (տասներեք հատ՝ Կեչուտ գյուղում, յոթանասունհինգ հատ՝ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում և քսան հատ՝ Հ 42 մայրուղու վրա) օգտագործման իրավունքով ս/թ դեկտեմբերի 10-ից տրամադրել «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Հենասյուների օգտագործման պայմանագրի ժամկետ սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 10-ը:

3. «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է համայնքապետարանի 900365031138 հաշվեհամարին վճարել ամսական 54 000 (հիսունչորս հազար) դրամ՝ լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի դեկտեմբերի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 դեկտեմբերի 8
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2020թ. N 293-Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Հայկ Հարությունի Ղարագյոզյանի դիմումը (մտից N 1418, 10.12.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Երևան քաղաքի բնակիչ Հայկ Հարությունի Ղարագյոզյանի սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի վրա գտնվող 25 (քսանհինգ) հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հետևյալ հասցեն.

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 4 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը բաժանել երկու առանձին գույքային միավորների՝ ըստ «ԻՆԷՔՍ» ՍՊԸ–ի կողմից տրամադրված հատակագծերի:

3. Սույն որոշման երկրորդ կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները.

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 4 -մակերեսը՝ 23,7216 հա
Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 4/1 -մակերեսը՝ 1,0 հա

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ